10219361

# ԲԱԶՄԱՎԷՊ

ՕՐԱԳՐ

ԺԵ ՏԱՐԻ, ԹԻՒ 8. 1857 ԱՊՐԻԼ 15.

## բարոյական

### ԻՐԵՔ ԹՈՒՈՑՆ ԲԱՐՈՑԱԿԱՆԸ [1]

Ամենամեծ իրեք մեղքերն. հայհոյութիւն, գայթակղութիւն և անառակութիւն։

Աբիսողոմի իրեք հարկաւոր վնասները. զգուշացիր անպիտան կնոջէ, գինեխումէ և թշուառ մարդը արհամարհելէն։

Աստուծոյ գիմաց աւելի ատելի մարդիկն են աղքատ հպարտը, հարուստ ագահը, հեշտասէր ծերը։

Իրեք շարժառիթք մարդկային գործոց. սէր, փառք և շահ։

Նողք իրեք բան պէտք է տան իրենց որդւոցը. մնունդ, կրթութիւն և բարի օրինակ։

Իրեք դժուարին բաներ. ժամանակը աղէկ գործածել, գաղտնիք պահել, և անիրաւութեանց ներել։

Ընջի իրեք մեղքերն. հպարտութենէ հրեշտակաց՝ յերկինս, անհնազանդութիւն Ադամայ և Եւայի՝ ի դրախտին, և եղբայրասպանութիւն Կայէնի երկրիս վրայ։

Ինկարգութեանց իրեք մեծ խայծերն. պար, երգ, և երաժշտութիւն։

Իրեք հնարք բարկացողի մը հետ վարուելու. կամ բոլորովին լռել, կամ անուշ հանդարտ կերպով պատասխանել, և կամ ելլել երթալ քովէն։

Լախանձու աստուծոյն ձեռքը իրեք օձ կու տան դիցաբանները։

Հոգւոյն իրեք կարողութիւններն. միտք, կամք, և յիշողութիւն։

Մտաց գլխաւոր իրեք գործողութիւններն. ըմբռնումն, դատումն, և տրամաբանութիւն։

Իրեք բան պէտք է զարհուրեցընել զմարդ. ժամանակը որ կ՝երթայ կ՝ան-

[1] Տես երես 85։

ցնի, մահը՝ որ կուգայ վրայ կը հասնի, և յաւիտենականութիւն՝ որ մեզի կը սպասէ։

Իրեք բան վտանգաւոր տեղ ընկած. գինին գինովի ձեռք, թուչուն՝ պզտի տղու ձեռք, և ստակ՝ շռայլ մարդու ձեռք։

Իրեք չարիք կայ որ դժուարաւ կ'ուղղուին. ագահութիւն, խենթութիւն, և նախանձ։

Պարտացիք իրեք առաքինութիւն ունէին. ախտերէ կը գարշէին, առաքինութիւն կը սիրէին և օրինաց կը հնազանդէին։

Իրեք ժանտախտ մարդկային ընկերութեան. ագահութիւն, ապերախտութիւն, և չարախօսութիւն։

Իրեք բան կայ որ մարդուս քնութիւնը կը փոխէ. գինի, կին և շահ։

Պարդս իրեք տեսակ բարիք ունի, բարիք մարմնոյ որ ախորժելի են, բարիք բաղդի որ օգտակար են, բարիք հոգւոյ՝ որ պարկեշտ են։

Իրեք բան կայ որ զմարդ կարգէ դուրս գործողութիւններ ընելու կը յորդորէ. սէր կանանց, սէր փառաց և սէր հարստութեանց։

Իրեք յարգ ունի առաքինութիւնն. վտանգի մէջ կը զօրացընէ, վշտաց մէջ կը զտէ կը մաքրէ, և թշուառութեանց մէջ սրտի հանգստութիւն կուտայ։

Սորհուրդ տալու վրայ իրեք գեղեցիկ ձշմարտութիւն. խորհուրդ հարցընելը իմաստութիւն, ուզողին տալը՝ էնուիրական գործք ողորմութեան. իսկ չուզողին տալը՝ նախատուիլ ուզել է։

Իրեք անտանելի բաներ՝ որ քաղցրութիւն կը ծնանին. անօթութիւնն՝ որ ամէն կերակուր կ'ազնուացընէ, ծարաւն՝ որ աղտոտ ջուրն ալ մաքուր կ'ելևցընէ, և աշխատութիւնն՝ որ քաղցր հանգիստ մը վայելել կուտայ։

Կռեղեցկութեան վրայ իրեք կարծիք ունի Պղատոն. կամ բնութեան տուրք մըն է, կամ աստուածային պարգև մը և կամ ձառագայթ աստուածութեան։

Արաժշտութիւնն իրեք կարողութիւն ունի. զԱստուած կ'օրհնէ, պատերազմի կը գրգռէ, և զմարդ կ'ուրախացընէ։

Պարդասէր՝ Ներոնը միայն իրեք տարի թագաւորեց։

Իրեք անուանի մահարձանք հնոց մէջ. Արտեմիսեայ, Զեւսոսի և Արդրիանոսի։

Իրեք գլխաւոր յատկութիւնք ունի բռնաւորը. առիւծի պէս կատաղի, գայլու պէս յափշտակիչ, և ընձու պէս նենգաւոր։

Իրեք անուանի պատերազմող կանայք. Շամիրամ, Զենոբիա և Սամիրիս։

Յուդիթ իրեք հնարք բանեցուց ըզՕղոֆեռնէս սպաննելու համար. գեղեցկութեամբը ապշեցուց, խոհեմութեամբը խաբեց, և քաջասրտութիւն սպաննեց։

Իրեք զօրաւոր բաներ. անմեղութիւնը որ ամենևին չվախնար, առաքինութիւն՝ որով մարդ շիտակ իր վախճանին կը դիմէ, և քաջասրտութիւն որ ամէն բանի դէմ կ'ելլէ։

Իրեք մարդիկ հնոց մէջ՝ մարմնով բոլորովին տգեղ ու հոգւով գեղեցիկ. Սոկրատ, Կրատէս և Զզոբոս։

Իրեք բան մարդուս կեանքը կը կարճեցընէ. անմտութիւն, անբարեխառնութիւն և եղեռնագործութիւն։

Իմաստուն կառավարութեան մը իրեք գլխաւոր պարտքն. տղայոց դաստիարակութիւն, վարձատրութիւն ազնիվ գործ գործողին, և յանցաւորաց պատիժ։

Պարդուս հարկաւոր իրեք օգտակար ընկերակցութիւնք. խաղաղութեան՝ անմեղութեան հետ, առատութեան՝ ճարտարարուեստութեան հետ, և ապահովութեան՝ զօրութեան հետ։

Պատանան իրեք պաշտօն ունի. դարանակալ բարիներուն, օգնական չարագործաց և չարչարիչ դատապարտելոց։

Կարդալը իրեք օգուտ ունի. խելքը կը սրէ, յիշողութիւնը կը հարստացընէ և ընկերութեան մէջ տգէտի կարգ անցնել չիտար։